

«Հաստատում եմ»

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»

տեխն. գ. դ. պրոֆեսոր



Իրավագրամի ռեկտոր,

Ռ. Ռ. Սահակյան

2022 թ.

## ԿԱՐԾԻՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անահիտ Սանդրոյի Ավետիսյանի «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» խորագրով ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Անահիտ Սանդրոյի Ավետիսյանի «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 8, կայացած՝ 24.11.2022թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ. դոցենտ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի աշխատակիցներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Մ. Շահվերդյանը, Ա. Ղազարոսյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ա. Հարությունյանը, Ա. Հովհաննիսյանը, Բ. Վիրաբյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարությանը, հ.գ.թ. Չ. Գրիգորյանը, դասախոսներ՝ Տ. Մալումյանը, Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը:

ՀՀ անկախությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց կրթության համակարգում փոփոխությունների և միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու համար: Հայտնի է, որ ՀՀ բուհերում արտասահմանցի ուսանողների թիվը տարեցտարի ավելանում է, ընդլայնվում է նաև նրանց աշխարհագրությունը,

ուստի առավել կարևորվում են օտարերկրացի սովորողների կրթության հետ կապված խնդիրները: Հայաստանի սոցիալ-մշակութային կյանքին օտարերկրացի ուսանողների ինտեգրման գործում էական նշանակություն ունեն լեզուն և մշակույթը: Հայտնի է նաև, որ լեզուն հաղորդակցության միջոց է, և ինչքան էլ տարբերվեն բուհերի օտարերկրացի ուսանողների մասնագիտական նպատակները, դրանք կարող են համընկնել սոցիալ-մշակութային համատեքստում: Օտարերկրացի ուսանողների հաղորդակցման դժվարությունները հայաստանյան բուհական կրթության միջավայրում վկայում են կրթության բովանդակության և ծրագրային փոփոխությունների անհրաժեշտության մասին:

Թեև հայաստանյան բուհերի միջև առկա է համագործակցություն, սակայն թերի է օտար լեզվի ուսուցման բովանդակության արդիականացման, լավագույն փորձի փոխանակման գործընթացը: Այս դիտանկյունից կարևոր է բուհերում սովորող օտարերկրացի ուսանողների՝ Հայաստանի սոցիալ-մշակութային կյանքին հնարավորինս արագ ինտեգրմանն ուղղված քայլերի բարելավումը: Հայաստանի կրթական համակարգում օտարերկրացիներին հայերենի ուսուցումը սկզբնավորվեց տարերայնորեն, սակայն ժամանակակից սոցիալ-մշակութային պայմաններում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են համապատասխան լուծումներ: Սույն հետազոտության նպատակ է հանդիսացել բացահայտել հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների Հայաստանի սոցիալ-մշակութային ինտեգրման առանձնահատկությունները, օրինաչափություններն ու դժվարությունները, ինչպես նաև հաղորդակցական, հանրամշակութային, միջմշակութային կոմպետենցիաների զարգացման ուղղությամբ հնարավոր արդյունավետ լուծումների վերհանումն ու առաջադրումը:

Աշխատանքում դիտարկվել են Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին օտարերկրացի ուսանողների ինտեգրմանը խոչընդոտող մի շարք գործոններ.

- ✓ հայերենը՝ որպես օտար կամ երկրորդ լեզու ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ համակարգային վերլուծությունների բացակայությունը,
- ✓ բուհերի օտարերկրացի ուսանողների հայերենի միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման վերաբերյալ հետազոտությունների ոչ բավարար քանակը,

- ✓ բարձրագույն ուսումնական հաստատություններում հայերենը՝ որպես օտար կամ երկրորդ լեզու սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ու գնահատման միասնական համակարգի և չափորոշիչների բացակայությունը,
- ✓ նշված ոլորտում գիտահետազոտական աշխատանքների, ուսումնական ձեռնարկների, տեղեկատու նյութերի, տարբեր կրթական ռեսուրսների սահմանափակ լինելը,
- ✓ ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ոչ բավարար մակարդակը:

Այս հարցերն են, որ պահանջում են լուրջ ուսումնասիրություններ և մանկավարժական, սոցիալ-մշակութային, հոգեբանական լուծումներ:

Վերոհիշյալ հարցերին, այդ թվում օտարերկրացի ուսանողների մշակութայնացմանը, մոտիվացիայի, մտածողության ձևավորմանը և հայերենի դասավանդման առանձնահատկություններին է նվիրված սույն աշխատանքը:

Ատենախոսը հիմնավորել է թեմայի ընտրությունը, հետազոտության արդիականությունը, ներկայացրել նպատակը, խնդիրները, ընդգծել գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունները: Ներածության մեջ գիտական հիմնավորումներով շարադրված են պաշտպանության ներկայացվող դրույթները: Հեղինակը հիմնախնդրի ծագման և զարգացման հարցերին անդրադառնալիս պահպանել է պատմականության սկզբունքը:

Ատենախոսության առաջին «Լեզուն և մշակույթը որպես սոցիալ մշակութային միջավայրին ինտեգրման միջոց» գլխում, ուսուցման և ուսումնառության սոցիալ-մշակութային տեսությունները դիտարկվել են որպես օտար լեզվի ուսուցման մեթոդաբանական հիմք, շեշտադրվել է լեզվի և մշակույթի կապը օտար կամ երկրորդ լեզվի յուրացման գործընթացում: Առաջին ենթագլխում որպես աշխատանքի հիմնական մեթոդաբանական հիմք է դիտարկվել Լև Վիգոտսկու անձնավորության զարգացման գոտիների վերաբերյալ տեսությունը, ինչպես նաև Ռ. Թարայի և Ռ. Գալիմորի առաջադրած «Կարգավորման քառափուլ մոդել»-ը:

Գիտական մակարդակով ներկայացվել են այն հարցերը, որոնք մտահոգել են ատենախոսին, և դրանց լուծման տեսական դրույթներն էլ նա օգտագործել և առաջադրել է աշխատանքում: Օտար լեզվի ուսուցման գործընթացում սոցիալական փոխգործակցությունը և համագործակցությունը օտար լեզվի դասաբանում սոցիալ-

մշակութային տեսության շրջանակներում ձևավորված «աջակցության» բաղադրիչի դրսևորումն է: Այդ համատեքստում ևս կարևորվում է աջակցության դերը, երբ առաջին պլան են մղվում ուսումնառության միջավայրը, սովորողների միջև փոխգործակցությունը, հասակակիցների, ուսուցիչների, լեզվակիրների օգնությունը, մշակութային իրողությունների օգտագործումը:

Գլուխն ամփոփվել է «Հաղորդակցական դասարան» հասկացության կարևորությամբ և ձևավորող տարրերի շարադրմամբ:

Երկրորդ՝ «Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի յուրացման միջավայրի առանձնահատկությունները» գլխում մանրամասն ներկայացվել են օտարերկրացի ուսանողների հոգեբանական, սոցիալական, ակադեմիական հարմարման գործընթացները, նրանց մշակութայնացումը և հայերենի դասավանդման առանձնահատկությունները Հայաստանի սոցիալ-մշակութային համատեքստում, շեշտադրվել հայկական սոցիալ-մշակութային գործոնի դերն արտասահմանցի ուսանողների մշակութայնացման, մոտիվացիայի և մտածողության ձևավորման գործում: Նկատի ունենալով ՀՀ կրթական համակարգի ինտեգրումը համաշխարհային կրթական համակարգին, միաժամանակ արդի մարտահրավերները, միջազգային ուսանողների շարժունակությունը, կամավորական երիտասարդների շարունակական աճը մեր երկրում՝ հայերենի իմացության դերն ինտեգրման գործընթացում կարևորվել է երկրորդ ենթագլխում:

Երրորդ գլխում հանգամանալից ներկայացվել է լեզվի միջոցով օտարերկրացի ուսանողների՝ ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման բնագավառում առկա հիմնահարցերի բացահայտման համար իրականացված առցանց սոցիոլոգիական հարցումների վերլուծությունը (հավելված 22), ուսումնասիրվել սովորողների մոտիվացիայի, նպատակի, ուսումնառության նախընտրելի միջավայրի, լեզվական առաջնահերթությունների, լսարանային դասընթացի ժամանակահատվածի հարաբերակցությունը (հավելված 24), արտասահմանցի ուսանողների հայերեն սովորելու մանկավարժական պայմանները և դրանց ազդեցությունը նրանց լեզվական մակարդակի ձևավորման վրա (հավելված 34):

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք աշխատանքի նպատակի, խնդիրների, պաշտպանության ներկայացվող դրույթների օրգանական շարունակությունն են (էջ 126-128):

Գրախոսվող աշխատանքում օգտագործված աղբյուրների ցանկն արդիական է, ինչն արտահայտում է հեղինակի կողմից հիմնախնդրի ժամանակակից ըմբռնումը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Գրախոսվող աշխատանքը կարևոր ներդրում է օտարերկրացի ուսանողների Հայաստանի սոցիալ-մշակութային գործընթացներում ինտեգրմանը:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործական արժեքը, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Աշխատանքի գլուխների, ենթագլուխների և սեղմագրի գլուխների, ենթագլուխների վերնագրերում կան անհամապատասխանություններ
2. Աշխատանքում ներկայացված է հարցմանը մասնակցած սփյուռքահայ և այլազգի, իգական և արական սեռի ուսանողների տոկոսային հարաբերակցությունը (էջ 93), սակայն հստակեցված չէ նրանց Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր ինտեգրման առանձնահատկությունները:
3. Ցանկալի էր, որ հայերենի որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով որոշվեր Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման մոդելի արդյունավետության մակարդակը, այնուհետև կատարվեին փորձարարական աշխատանքներ (օրինակ՝ գիտափորձ):
4. Գրականության ցանկում նշված չեն բազմաթիվ աղբյուրների (110, 111, 112, 126 և այլն) էջաքանակները, որոնք հակասում են ԲՈԿ-ի կանոնակարգին:
5. Հղումները կատարված են նույնպես ԲՈԿ-ին հակասող, անհասկանալի չափանիշներով. «Գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ ատենախոսության մասերի հղումների: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները /տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը/»: [https://www.bok.am/sites/default/files/inline-files/aten\\_dzev.pdf](https://www.bok.am/sites/default/files/inline-files/aten_dzev.pdf):

6. Համացանցային ռեսուրսներում օգտագործված աղբյուրները ցանկալի էր ներկայացնել վերնագրերի հետ միասին:

7. Աշխատանքում առկա են նաև տպագրական վրիպակներ:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության արժեքի վրա:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունն ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս եզրակացնել, որ Անահիտ Սանդրոյի Ավետիսյանի «Ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ինտեգրումը Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր» թեմայով ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,

Մ. Գ. Թ., դոցենտ  Գ. Բաղդասարյան

Լ. Գ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՎՊԶ-ի վարիչ  Ս. Ս. Բեժանյան

